ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թվականի N 2054-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի 02-Ն հրամանի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2026 թվականի սեպտեմբերի 30-ին, ժամը՝ 11:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի Առողջապահություն» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ:

2.Աշխատակազմի ղեկավար Մարատ Հովհաննիսյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

3.Մրցույթի անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Մարուշ Հակոբյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2026 թվականի օգոստոսի 31
ք.Մեծամոր

Հայտարարություն

Տեսակ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ
Հիմք	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի համաձայն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի Առողջապահություն» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ:

հոակ.docx

37460900303

info.metsamor@mta.gov.am

ՄԵԾԱՄՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 4

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Մեծամորի Առողջապահություն» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն

Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք ունեն՝

- ✓ բարձրագույն բժշկական կրթություն,
- ✓ հանրային ծառայության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահական բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
- ✓ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,

3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,

5. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,

6. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2. տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

3. օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն,

4. դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

5. զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել,

6. ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում,

2. մեկ լուսանկար՝ 3X4,

3. քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին,

4. ինքնակենսագրություն,

5. անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,

6. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

7. հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթն անցկացվում է բաց եղանակով:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝

1.թեստավորում

2.հարցազրույց

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը՝ 9:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 15.09.2026թ. ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա՝ 30.09.2026թ.-ին, ժամը՝ 11:00:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Մեծամորի համայնքապետարան (ք. Մեծամոր,Վարչական կենտրոն շ. 4):

Հեռ.՝ 060900303